



ԵՎԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԻՋԵՎԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՍ ԵՎ «ՀԱԼԵՊ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ԲԱՐԵՄԻՐԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամը (ՀԿՍ) և «ՀԱԼԵՊ» հայրենակցական բարեսիրական հասարակական կազմակերպությունը («ՀԱԼԵՊ» ՀԿ) «Երիտասարդների պայծառ ապագա» ծրագրի շրջանակներում նախատեսում են կրթաթոշակներ տրամադրել ՀՀ բուհերում ուսանող *սիրիահայ, իրաքահայ, տեղահանված այլ անձանց, ինչպես նաև տեղացի ուսանողներին*: Ստորև ներկայացված են կրթաթոշակի դիմելու պայմանները, ընտրության չափանիշները և ադմինիստրատիվ գործընթացները:

ԿԱՆՈՆԱԿԱՐԳԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կրթաթոշակ ստանալու ընտրության չափանիշները և ընթացակարգերը ներկայացված են հետևյալ հերթականությամբ՝ (ա) դիմելու պայմանները, (բ) ընտրության չափանիշները, որոնք հիմք են հանդիսանալու կրթաթոշակակիրներին ընտրելու համար, և (գ) դիմումի հետ կապված ընդհանուր ադմինիստրատիվ պահանջները:

ԿՐԹԱԹՈՇԱԿԻՆ ԴԻՄԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. **Կրթություն:** Յուրաքանչյուր դիմորդ պետք է լինի Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված ԲՈՒՀ-երից որևէ մեկի բակալավրիատի, մագիստրատուրայի կամ ասպիրանտուրայի ուսանող:
2. **Նվազագույն գնահատականներ:** Յուրաքանչյուր դիմորդի ընդհանուր միջին գնահատականը պետք է լինի առնվազն 3.0՝ 4.0-ից, 16՝ 20-ից կամ 80՝ 100-ից: Յուրաքանչյուր դիմորդ պարտավոր է ներկայացնել իր գնահատականների հավաստագրված կամ այլ պաշտոնական օրինակը, կամ խնդրել ԲՈՒՀ-ին՝ գնահատականների մասին տեղեկատվությունը տրամադրել «ՀԱԼԵՊ» ՀԿ-ին:
3. **Հաճախում:** Ուսանողը պետք է կարողանա փաստել, որ հաճախում է տվյալ ԲՈՒՀ-ը:

4. **Լրացված դիմում:** Դիմորդը պետք է ներկայացնի ամբողջական լրացված հայտադիմումն ու պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև ցանկացած այլ փաստաթուղթ, որը կպահանջվի ՀԿՄ հիմնադրամի և «ՀԱԼԵՊ» ՀԿ-ի կողմից՝ որպես դիմումի փաթեթի մաս:

ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ստացված բոլոր դիմումները դիտարկելով՝ ՀԿՄ հիմնադրամը և «ՀԱԼԵՊ» ՀԿ-ն կընտրեն կրթաթոշակակիրներին: Ընտրող հանձնաժողովը առաջնորդվելու է կրթաթոշակ տրամադրելու հետևյալ չափանիշներով՝

5. **Համապատասխանություն:** Յուրաքանչյուր դիմում պետք է համապատասխանի վերոնշյալ բոլոր պայմաններին:
6. **Անկողմնակալ և ոչ խտրական ընտրություն:** ՀԿՄ հիմնադրամի և «ՀԱԼԵՊ» ՀԿ-ի ներկայացուցիչներից բաղկացած ընտրող հանձնաժողովն ընտրելու է կրթաթոշակակիրներին՝ հիմք ընդունելով ստորև թվարկված չափանիշներին նրանց համապատասխանությունը և ֆինանսական կարիքը: Ընտրող հանձնաժողովը կրթաթոշակակիրներին ընտրելու է անկողմնակալ և ոչ խտրական հիմքերով՝ անկախ դիմորդի սեռից, ռասայից, կրոնից և հաշմանդամությունից: Ընտրող հանձնաժողովը պետք է անկողմնակալորեն դիտարկի նաև դիմորդների ուսումնական հաստատություններն ու մասնագիտական ոլորտները:
7. **Օբյեկտիվ ընտրության չափանիշներ:** Կրթաթոշակակիրներին ընտրելիս հանձնաժողովը պետք է առաջնորդվի հետևյալ չափանիշներով.

- Ակադեմիական առաջադիմությունը և գնահատականները,
- Մասնակցությունը բուհական, արտադասարանային և համայնքային գործունեությանը,
- Երաշխավորական նամակներ դասախոսներից կամ համայնքային ներկայացուցիչներից՝ ըստ պահանջի,
- Հանձնաժողովի անդամների եզրակացությունները՝ ելնելով հարցազրույցից, մոտիվացիոն նամակից, կամ ներկայացված այլ փաստաթղթերից, որոնք վկայում են դիմորդի նպատակների, բնավորության, ունակությունների և կարողության մասին,
- Ֆինանսական կարիքի անհերքելիությունը՝ նպատակ ունենալով ֆինանսական աջակցություն տրամադրել այն դիմորդներին, ում կարիքներին համապատասխան այլ աջակցություն հասանելի չէ,
- Դիմորդը պարտավորվում է մասնակցել «Երիտասարդների պայծառ ապագա» ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումներին, վիդեոտեսանկարահանումների աշխատանքներին և անհրաժեշտության դեպքում՝ կամավորության: Չմասնակցելու դեպքում, «ՀԱԼԵՊ» ՀԿ-ը իրավունք ունի տվյալ ուսանողից պահանջել ետ վերադարձնել իր ստացած կրթաթոշակի ամբողջ գումարը կամ դրա մի մասը:

Ընտրող հանձնաժողովը սույն չափանիշները կկիրառի ողջամիտ և օբյեկտիվ: Սակայն, յուրաքանչյուր չափանիշ չպետք է համարժեք դիտարկվի յուրաքանչյուր դիմորդի դեպքում:

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂՄԻՆԻՍՏՐԱՏԻՎ ՊԱՀԱՆՁՆԵՐ

8. **Կրթաթոշակների քանակն ու գումարի չափը:** Կրթաթոշակների և ֆինանսական աջակցության չափն ու քանակը որոշվելու է ընտրող հանձնաժողովի հայեցողությամբ:
9. **Գումարի ուղղակի վճարում:** Գումարային աջակցությունը կրթաթոշակակրի անունից անմիջականորեն բանկային փոխանցումով վճարվելու է այն ԲՈՒՀ-ին, որտեղ նա ուսանում է: «ՀԱԼԵՊ» ՀԿ-ն կրթաթոշակակրի կրթական առաջադիմության մասին կարող է անմիջականորեն տեղեկանալ նրա ԲՈՒՀ-ից, իսկ ԲՈՒՀ-ը ֆինանսական աջակցությունը պետք է ընդունի միայն այն ուսանողների համար, ում անունները նախապես հաստատված են «ՀԱԼԵՊ» ՀԿ-ի կողմից:
10. **Չօգտագործված գումարի վերադարձ:** Ցանկացած կրթաթոշակային գումար, որը չի օգտագործվել ուսումնական թույլատրելի ծախսի համար, պետք է վերադարձվի «ՀԱԼԵՊ» ՀԿ: Եթե կրթաթոշակի պայմանները խախտվում են, ապա «ՀԱԼԵՊ» ՀԿ-ն ողջամիտ ջանքեր կգործադրի՝ ոչ պատշաճ կերպով ձեռք բերված կրթաթոշակը վերադարձնելու համար:
11. **Գումարի օգտագործում:** Կրթաթոշակը բացառապես պետք է օգտագործվի որակավորում ունեցող ԲՈՒՀ-երում ուսման վարձերը վճարելու համար:
12. **Փաստաթղթերի պահպանում:** Կազմակերպությունը կպահպանի կրթաթոշակային դրամաշնորհների հետ կապված բոլոր դիմումների և վճարումների փաստաթղթերը ծրագրի ողջ ընթացքում և դրա ավարտից հետո հինգ (5) տարի: Այդ փաստաթղթերը պետք է պարունակեն առնվազն (ա) ողջ տեղեկատվությունը, որը «ՀԱԼԵՊ» ՀԿ-ն ստանում է յուրաքանչյուր դիմորդից; (բ) յուրաքանչյուր կրթաթոշակի գումարի չափն ու նպատակը; (գ) դիմորդի մասին ողջ տեղեկատվությունը, ներառյալ՝ «ՀԱԼԵՊ» ՀԿ-ի հետ նրանց առնչության մասին; և (դ) ցանկացած այլ տեղեկատվություն, որը «ՀԱԼԵՊ» ՀԿ-ն ստանում է՝ որոշելու կրթաթոշակի հայտի նորացման հնարավորությունը (ներառյալ՝ կրթաթոշակի նպատակային օգտագործման մասին տեղեկատվությունը):

Կրթաթոշակ և ֆինանսական աջակցություն ստանալու դիմումին կից

անհրաժեշտ փաստաթղթերը

- 1 անձնագրի լուսանկար (3x4),
- Անձնագրի պատճեն,
- Համալսարանի գնահատականների վերաբերյալ տեղեկանք (պետք է խնդրել համալսարանից),
- Ուս. հաստատության կողմից տրված տեղեկանք, որտեղ նշված կլինի մասնագիտությունը և տարեկան ուսման վարձի չափը
- Համալսարանի բակալավրի ավարտական վկայական/միջուկ (մագիստրատուրայի ուսանողների դեպքում),
- Համալսարանի մագիստրատուրայի ավարտական վկայական/միջուկ (ասպիրանտուրայի ուսանողների դեպքում),
- Համալսարանի բանկային հաշվեհամարը,
- Մոտիվացիոն նամակ (500 բառով ներկայացրեք, թե ինչու եք ցանկանում կրթություն ստանալ տվյալ մասնագիտությամբ, և որքանով այն կնպաստի ձեր ձգտումների իրականացմանը),

- Աշխատող ուսանողների համար՝ տեղեկանք գործատուից աշխատավարձի չափի վերաբերյալ,
- Ծնողների աշխատավայրից տեղեկանք և/կամ տեղեկանք համապատասխան մարմիններից գործազրկության և անապահովության վերաբերյալ
- Վերջին 3 ամիսների կոմունալ վճարների կտրոնները (ջուր, հոսանք, գազ) կամ տվյալ տարածքի ՀԷՑ-ի գրասենյակից կնքված տեղեկանքի թուղթ:

Հետևյալ փաստաթղթերը, եթե առկա են՝

- Հաշմանդամության վկայական (դիմորդի կամ նրա ծնողների),
- ՀՀ բանակում ծառայության վկայական,
- «Փարոս» ընտանեկան նպաստի վկայական,
- Ամուսնության վկայական,
- Երաշխավորական նամակներ,
- Կամավորական աշխատանքի վկայական:

ԿՐԹԱԹՈՇԱԿ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԴԻՄՈՒՄ

1. Անուն: _____
անուն հայրանուն ազգանուն

2. Ծննդյան ամսաթիվ: _____

3. Ծննդավայր: _____

4. Քաղաքացիություն: _____ Անձնագրի համար: _____

5. Հեռախոս: _____

6. Բջջային հեռախոսահամար: _____

7. Էլ. հասցե: _____

8. Մշտական/Ժամանակավոր բնակության հասցե՝ _____

1. Ամսական՝ բնակարանային վարձի գումար/եթե ապրում եք վարձակալությամբ/՝ _____

9. Ե՞րբ եք տեղափոխվել Հայաստան/ սիրիահայերի, իրաքահայերի և այլ փախստականների դեպքում/՝ _____

10. Ո՞ր ԲՈՒՀ-ում եք սովորում: _____

11. Ծրագրի/Ֆակուլտետի անվանումը: _____

12. Կուրս _____

1. Ընդհանուր միջին գնահատական: _____ : _____-ից
2. Տարեկան ուսման վարձ:

3. Դիմում եմ կրթաթոշակ ստանալու՝
2019-2020թ. գարնանային կիսամյակի համար _____
2020-2021թ. աշնանային կիսամյակի համար _____

13. Զբաղվածություն (եթե առկա է):

1. Աշխատանքի վայր: _____
2. Ամսական աշխատավարձ:

14. Ձեր բնակարանում բնակվող մարդկանց թիվը (խնդրում ենք նշել նրանց անունը, տարիքը և աշխատանքի վայրը, եթե առկա է)

- 1.
- 2.
- 3.
- 4.
- 5.

15. Որքա՞ն է ձեր ընտանիքի ամսական ընդհանուր եկամուտը:

16. Ստանու՞մ եք արդյոք ֆինանսական աջակցություն արտերկրից: Եթե այո, ապա որքա՞ն (ՀՀ դրամով)

Հետևյալ հատվածի համար խնդրում ենք կցել առանձին թուղթ՝ ձեր պատասխաններով:
Յուրաքանչյուր հարցի պատասխանը չպետք է գերազանցի 500 բառը:

1. Համառոտ ներկայացրեք ինչու՞ եք ընտրել այդ մասնագիտությունը, որո՞նք են Ձեր երկարաժամկետ և կարճաժամկետ պլանները: Որտե՞ղ եք Ձեզ տեսնում առաջիկա 10 տարիների ընթացքում: Ինչպե՞ս է Ձեր կրթությունը նպաստելու Ձեր անմիջական կամ հետագա աշխատանքային պլաններին: Խնդրում ենք բացատրել Ձեր ոլորտի կարևորությունը ժամանակակից հասարակական կյանքում: Ի՞նչ փոփոխություններ եք կանխատեսում Ձեր ոլորտում հետագա 10 տարիների ընթացքում: Որո՞նք են ներկա ամենաարդիական խնդիրները Ձեր ոլորտում: Ունե՞ք արդյոք կամավորական աշխատանքի փորձ:

2. Ֆինանսական տեսանկյունից, ինչպիսի՞ ազդեցություն կունենա այս կրթաթոշակը կամ ֆինանսական աջակցությունը Ձեր կրթության վրա: Խնդրում ենք նշել որևէ հատուկ անձնական կամ ընտանեկան հանգամանք (եթե առկա են)՝ Ձեր ֆինանսական կարիքի համար: Ինչպե՞ս եք նախկինում ֆինանսավորել Ձեր կրթությունը: Ստանո՞ւմ եք արդյոք ֆինանսական աջակցություն կամ կրթաթոշակ այլ կազմակերպություններից, որոնցից են Գալուստ Գյուլբենկյան հիմնարկությունը, Հայ օգնության ֆոնդը, ՀԲԸՄ-ն, Հայ կրթական հիմնարկությունը և այլն:

Դիմումների ընդունման վերջնաժամկետը՝ 05 մարտի 2020թ.

Սույնով հավաստում եմ, որ նշված տեղեկությունները ճշգրիտ են: Պարտավորվում եմ տեղեկացնել «ՀԱԼԵՊ» հայրենակցական բարեսիրական հասարակական կազմակերպությանը իմ կարգավիճակի ցանկացած փոփոխության մասին (օր. զեղչ, այլ կրթաթոշակ, այլ օգնություն, ուսման դադար և այլն) :

Հայտերի ներկայացման համար տեղեկատվություն ստանալու և այլ հարցերի դեպքում խնդրում ենք կապ հաստատել «ՀԱԼԵՊ» ՀԿ-ի աշխատակազմի հետ՝ հետևյալ հասցեով araksmartirosyan@aleppo-ngo.org կամ զանգահարել 098/096 545361 հեռախոսահամարին:

Հասցե՝ Հյուսիսային պողոտա 11 (մուտքը Աբուլյան փողոցից), -1 հարկ: